

Նայելով էրիշէ Րըքլուի բաժին, Lerchէն յետոյ ինչպէս
կը տեսնուի Քիւրդ լեզուին մէջ առաջդիմութիւն մը եղած է,
և չինդ գլխաւոր բարբառներ միանալով իջած են երեքի.
Կուրմանջիկ հարեի է համարել գլխաւորագոյն մայր բարբառը
որ կը խօսուի այժմեայ իսկական Քիւրդ խօսանի մէջ (Մուսուլի
կողմերը):

Ամերիկեան անտիքլորէտի մը հիմնուելով Քիւրդ խօսանի
մէջ մնացող միախօսարներու ուսումնասիրութեանը կ'ըսէ. —

«Քիւրդական ներկայ լեզուն կը կոչուի Կըրմանջի, Կիւ-
րան, Զազա. Զազան, Տէրսիմի արեւմտեան կողմը խօսած լե-
զուն է, որ լայն կերպով խառն է Հայերէնի, և չին Կապա-
դովկիոյ լեզուին հետքեր կը տեսնուին: Բուն քիւրդական լե-
զուն Արիական արմատ ունի:

Վիլիամ Քինէն Հնայած ուրիշ ժողովուրդներու Քիւրդ
լեզուի դէմ ունեցած արհամարհանքին մասնաւանդ Արաբնե-
րու՝ որ զայն կ'անուանեն (էշերու լեզու), ինքը կը գտնէ
Քիւրդ լեզուն՝ «սարլ, նուրը և ականջի բաւական հաճելի:» (*)

Զուտ լեզուի մասին այս տեսութիւններն ալ կ'ապացու-
ցանեն որ Քիւրդերը իրենց գոյութեան արմատական կորիզն
ունենալէ յետոյ, աստիճանաբար կաղժուած են և կը կաղժուին
զանազան ժողովուրդներէ. ինչպէս ցեղը՝ նոյնպէս և լեզուն
բաղադրուած է այդ զանազանութիւններէն. բայց ուշադրու-

(*) Ֆրանսական «Nouv. Larousse III. Dict. univ. Encyclopédique»ը
Քիւրդ լեզուի մասին կը գրէ. «Քիւրդերէնը նոր—իրանեան լեզու մըն է.
պարսկականի մօտիկ ազգական՝ բայց շատ աղաւաղուած իր ձայնականի
(phonétique) մէջ, իր բառարանի մէջ խորամուլեւ եղած են արաբ և թիւրք
տարրեր: Քիւրդ լեզուն քանի մը բարբառներ ունի, որոնց գլխաւորը
Կուրմանջիկն է որ կը խօսուի Մուսուլէն մինչև Փոքր—Ասիա: Գրականու-
թիւնը բաւական խեղճ է, նա գոյութիւն ունի առաւելապէս ժողովրդա-
կան պատմութեան, ռիւքազներգակ և քնարերգակ բանաստեղծու-
թեանց: Էշ, հաւաքուած նորերս իրիմ և Սոսէն երգիչներու բերանէն: